

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է նախարարությունում քաղաքացիական ծառայության հետևյալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

Ագրովերամշակման զարգացման վարչության ագրոբիզնեսի զարգացման բաժնի գլխավոր մասնագետ (30-2.3-133)

Գլխավոր մասնագետը՝

- իրականացնում է ագրոբիզնեսի ոլորտում կատարվող գործընթացների համալիր վերլուծությունների, համապատասխան կանխատեսումների հիման վրա ոլորտի զարգացման ռազմավարական ծրագրերի, հայեցակարգերի, օրենքների և իրավական այլ ակտերի նախագծերի մշակման աշխատանքները.

- մասնակցում է գյուղատնտեսական մթերքների տոնավաճառների կազմակերպմանը, շուկայական հարաբերությունների ձևավորման և համապատասխան ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված գործընթացներին, ինչպես նաև այլ գերատեսչությունների կողմից մշակված ագրոբիզնեսի ոլորտին առնչվող իրավական ակտերի նախագծերի քննարկումներին.

- իրազեկում է տնտեսավարող սուբյեկտներին արտերկրում կազմակերպվող ցուցահանդեսների և տոնավաճառների մասին.

- աջակցում է տեղական արտադրողների մարքեթինգային գործունեության իրականացման և գյուղատնտեսական մթերքների ու հումքի արտահանման խթանմանն ուղղված աշխատանքներին.

- ուսումնասիրում է ագրոբիզնեսի ոլորտում տիրող իրավիճակը, բարձրացնում է խնդիրներ և ներկայացնում առաջարկություններ դրանց լուծման համար.

- նախապատրաստում է Բաժնի առջև դրված գործառնություններից և խնդիրներից բխող առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթեր, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցեր.

- իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ, կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա

մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

- «Մննդամթերքի անվտանգության մասին», «Ստանդարտացման մասին», «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքների և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Աշխատավարձի չափը՝ 212,309 (երկու հարյուր տասներկու հազար երեք հարյուր ինը) ՀՀ դրամ

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին /ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, հեռ. 011-52-58-57/:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամկետը սահմանվում է մինչև նշված թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- գրավոր դիմում,
- անձնագրի պատճենը,
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),
 - աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում).
 - արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
 - մեկ լուսանկար 3x4 սմ չափսի:

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 22.08.2018թ.